Թէոդոս երկրորդ՝ որ և փոքր կոչի, ինքնակալեալ յամի Տեառն ՆԼԸ. թագաւորեալ ամս ԻԵ։ Սա էր որդի Արկադիոսի. ընդ հօրեղբօրն իւրում՝ զարևելեանն կառավարէր զիշխանութիւն։ Եւ յետ մահուանն Արկադիոսի՝ միահեծան տիրեաց։ Սա 'ի բարձր Հայք 'ի գաւառն Կարին, որ յարևելս քաղաք շինեաց՝ որ է Արզրում՝ որ Թարգմանի հող Հռոմոց. ընդ այն ժամանակս Մանգալացիք անցին յԱփրիկոյ զծովն Սեփեթէ. և զամենայն աշխարհս Սպանիոյ աւար հարին և աւերեցին զերկիրն։ Ի սորին ժամանակին յայտնեցաւ Նեստոր պիղծն՝ Եպիսկոպոսն Կոստանդնուպօլսոյ, որ ժողով ԵՃ. Հայրապետաց եղև յԵփեսոս քաղաքի։ Սա մեռաւ և թաղեցաւ 'ի Կոստանդնուպօլիս. յաւուրս սորա եղև իր զարմանալի իրիտէս կղզին. զի սատանայ երևեցաւ Հրէիցն ասելով, թէ՝ ես եմ՝ Մովսէս, որ առաքեցայ յԱստուծոյ՝ տանել զձեզ դարձեալ յերկիրն Աւետեաց՝ ցամաք ոտիւք